

ՌՈՒԲԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

## Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԸ

Զարմանալի է Միքայէլ Նալբանդեանցի<sup>\*)</sup> գրական աշխատանքի ճակատագիրը: 1866 թւականից, այսինքն բազմաչարչար հայրենասէրի մահից յետոյ, մինչեւ 1900 թւականների սկիզբները, բացի մի քանի ժողովրդականութիւն ստացած երգերից, նրա մնացած գըրութիւնները անծանօթ էին հայ լնթերցող հասարակութեան: Հսկելուները, հայ մտաւրականութեան վերին խաւերն իսկ հազիւ կարգացել էին Նալբանդեանցի «Հիւսիսափայլ»ում լոյս տեսած «Յիշատակարանները» կամ միւս յօդւածները: Թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ կրթւած խաւերը երգում էին ու անդիր անում «Ազատն Աստած» եւ «Մեր Հայրենիք»ը, լսած էին, որ Մ. Նալբանդեանցը «յեղափոխական է», «ազգաւուշական է», որ «բանտարկւած է» ու «աքսորի մէջ մեռած», բայց շատ հեռու էին մեր պատմական մեծ դէմքի իսկական պատկերը ծանաչելուց: Պատճառներ շատ կային եւ դրանցից զլիսաւորը, ի հարկէ, թիւրքիայի եւ Ռուսաստանի քաղաքական տիրող կացութիւնն էր ու սրա հետ կապւած գրաքննչական խիստ օրէնքները: Նման եւրոպական մի քանի պատմական դէմքերի, մեր մէջ էլ Մ. Նալբանդեանցը ծանօթ էր ժողովրդին իր անունով, իր երկու ոտանաւորով ու իր հմայքով, բայց անծանօթ էր իր գրւածքներով: Ու առաջին անգամ, 1900 թ. սկզբներին միայն ձեռնարկւում է Նոր-Նախիջևանում նրա երկերի հրատարակութիւնը, երկու հատորով: Բայց, չնորհիւ գրաքննչական պայմաններին ու Նալբանդեանցի գրութիւնների ցիր ու ցան վիճակին, այդ երկու հատորը, ինչպէս այժմ պարզուում է, լիակատար չէ: Վերջին երեսուն տարիների ընթացքում, Նալբանդեանցի մասին բոլոր գրողները ընդգծել

<sup>\*)</sup> Մենք գործ ենի ածում Նալբանդեանց եւ ոչ թէ Նալբանդեան, յարգելով մեր մեծագոյն հրապարակագրին որ գործ էր ածում «եանց» եւ ոչ թէ «եան» վերջաւորութիւնը: Բացի դրանից, մեր բալոր մէջը երբումներում գործածելու ենք ընդունած իին ուղղագրութիւնը եւ ոչ թէ այն, որ պարտադրւած է իս Հայաստանում:



Միք. ԿՈՒԲՈՎԻՆԵԱՑ

են, որ «կան Մ. Նալբանդեանցի ուրիշ անտիպ աշխատանքներ՝ գըր-  
ւած բանուում եւ արտասահմանում», որոնք սակայն, մինչեւ այժմս  
կորսւած են համարուում։ Ժամանակ առ ժամանակ, բոլորովին պա-  
տահարար, գտնուում ու տպւում էին Մ. Նալբանդեանցի այս կամ  
այն անտիպ աշխատանքների բեկորները՝ ուտանաւորը կամ գրի ա-  
ռած մտքերը, բայց մինչեւ վերջին տարիները նրա երկերի ամբող-  
ջական հրատարակութիւնը տեղի չունեցաւ։ Պէտք է ասել, որ այդ  
պակասը մասսամբ լրացւում էր վերջին ժամանակներում։ Խ. Հա-  
յաստանի կառավարութիւնը, բարեբախտաբար, լուրջ ուշադրութիւն  
դարձեց այդ գործի վրա։ Նա, Եր. Շահազդիզի ջանքերի չնորհիւ,  
Նոր Նախիջեւանից Երեւան փոխադրեց Մ. Նալբանդեանցի թանգա-  
րանը եւ այնտեղ գտնուած մի քանի ձեռագիրները, իսկ երկու տարի  
առաջ յանձնարարեց պ. Աշոտ Յովհաննիսիւսանին ձեռնարկել Մ. Նալ-  
բանդեանցի երկերի ամբողջական հրատարակութեան։

Այդ աշխատանքը աւարտւած է եւ այս օրերս լոյս է տեսած Մ.  
Նալբանդեանցի անտիպ զբւածքների մեծ հատորը՝ Ա. Յովհաննիս-  
եանի լրւարանութիւններով ու բացատրականներով, որոնք 800 էջ-  
նոց հատորի համարեա կէսն են բռնում։ \*) Հատորը պարունակում  
է — 1) Մ. Նալբանդեանցի ձերբակալման ու բանտարկութեան ժա-  
մանակ տրւած «Սենատական ցուցմունքները», ոռուերէն եւ հայերէն  
լեզով, 2) Մ. Նալբանդեանցի բանտում գրած ծոցատերը, 3) Բան-  
տի յիշատակարանը, 4) «Պոլահայ Լուսաւորչական համայնքը»  
յօդւածը, 5) «Հայ լեզուի ուսումնասիրութիւնը Եւրոպայում եւ հայ  
զբականութեան գիտական նշանակութիւնը», 6) Նամակներ Այլա-  
զովսկու վարդապետարանի մասին եւ 7) Կրիտիկա Պ. Պոօշեանի  
«Սօս եւ Վարդիթեր» վէպի։ Սրանց Ա. Յովհաննիսիւսանը կցում է իր  
«կոմինտարները», բացատրութիւնները եւ պարզաբանութիւնները,  
այսինքն 50–60–ական թւականների հայկական կեանքի հասարակա-  
կան-քաղաքական մթնոլորտի պատկերը, մէջբերելով բազմաթիւ  
տւեալներ ու նիւթեր նոյն շրջանի հայ եւ ոչ-հայ դէմքերի եւ քաղա-  
քական դէպքերի մասին՝ կապւած Մ. Նալբանդեանցի կամ անձնա-  
ւորութեան եւ կամ նրա աշխատանքների հետ։

Իր իմբագրած հատորին Ա. Յովհաննիսիւսանը կցել է «Ան-  
ւանական բառարան»՝ 70 էջից բաղկացած եւ մի «անւանացուցակ»՝  
մօտ 700 անուններով, որոնք յիշատակած են կամ Մ. Նալբանդեան-

\*) «Մ. Նալբանդեան Անտիպ յերկեր խմբագրություն եւ կոմինտարներ Ա-  
շոտ Հովհաննիսիւսանի. Պետական Հրատարակություն, Յերևան, 1935. Մուկվա-  
800 էջ, Մ. Նալբանդյանի յերկու պոբարէտներ ժողով. Ցկարիչ Մար. Սարյանի»։

ցի երկերում եւ կամ խմբագրողի գրւածքներում։ Ինչպէս էլ մօտենանք Ա. Յովհաննիսեանի արած պարզաբանութիւններին, ինչքան էլ որոշ վերապահումներ ունենանք նրա այս կամ այն բացատրութիւնների ու կարծիքների, ինչպէս եւ նրա գործածած պատմափիլսոփայական մէժոտի վերաբերմամբ (Ա. Յովհաննիսեանը ուսումնասիրում է Մ. Նալբանդեանցին «Ըիալէկտիկական մատէրիալիզմի» կամ «մարքսիստական» տեսակէտից), բայց եւ այնպէս անաչառութիւնը պահանջում է խոստովանել, որ Ա. Յովհաննիսեանը կատարել է մի հսկայական աշխատանք, ի յայտ բերելով ոչ միայն Մ. Նալբանդեանցի անտիպ գրւածքները, ցուցմունքները, նրա հասարակական կեանքի մի քանի անյայտ գէպքերը, այլ եւ ուսումնասիրել կամ ծանօթացել է բոլոր այն նիւթերի հետ, որոնք հրատարակւած են եղել հայ հրապարակագրի մասին։ Աւելին՝ Ա. Յովհաննիսեանը ծանօթացել է նոյն պատմական շրջանի հայ հասարակական գործիչների անտիպ մնացած թղթերի հետ եւ գտել է բազմաթիւ տւեալներ Մ. Նալբանդեանցի վերաբերեալ։ Օրինակ՝ նա մէջբերումներ է անում Սըմբատ Շահպետի, Մսեր Մսերեանի, Կ. Եղեանի եւ ուրիշների անձնական անտիպ արխիմերից, ցարական ոստիկանութեան գաղտնի թըղթերից, ինչպէս եւ վերջերս Մոսկայում հրատարակւած «Ցենտրօարխիւնները» հրատարակութիւնից։ Զենք կասկածում, որ այս տեսակ գիտական մի հրատարակութիւն կապւած է անյաղթելի գժւարութիւնների հետ ու երեւի պահանջել է երկար տարիների աշխատանք։ Չնայած դրան, ինչպէս խոստովանում է խմբագրողը, Մ. Նալբանդեանցի գրութիւնների «Խոչորագոյն մասն անյայտ է տակաւին կամ յայտնի միայն անւամբ», ուստի եւ խմբագրողը ցանկութիւն է յայտնում, որ սրանով ոչ թէ աւարտէր, այլ սկսէր նրա երկերի գիտական հրատարակութեան համար անհրաժեշտ նախապատրաստակն աշխատանքը։ «Անտիպ երկերի այս ժողովածուով, ասում է Ա. Յովհաննիսեանը, նախ քան հեղինակի «Երկերի» լիակատար հրատարակութեան հատորների լոյս տեսնելը, մեր նպատակներից մէկն է ոչ միայն ընթերցողի սեփականութիւն դարձնել օր առաջ նորոյթի հրապոյր ունեցող այս նիւթերը, այլ միաժամանակ հասարակական հարցասիրութիւն առաջացնել գէպի հրապարակախօսի ձեռագրական ժառանգութիւնը յայտ բերելու խնդիրը։ Հատ ու կենտ ուսումնասիրողների անհատական ջանքերը բաւական չեն դժւարին այդպիսի մի գործ յաջողութեամբ առաջ տանելու համար։ Հարկաւոր է ընթերցողների եւ հետախոյցների լայն հասարակայնութեան գործակցութիւնը։ Անհրաժեշտ է հասարակական հարցանիւթիւն գէպի գրողի ժառանգութիւնը։ Առանց դրան անհնարին է

լոյս ընծայել «Երկերի» նոր ժողովածուն՝ XIX դարի մեծագոյն հը-  
րապարակախօսին արժանի ինսամքով եւ լիակատարութեամբ»:

Եւ, յիրաւի՝ չնայած Ա. Յ.-ի բոլոր ջանքերին, տակաւին չեն  
յայտնաբերւած ոչ միայն Մ. Նալբանդեանցի մի շարք անտիպ ձեռա-  
գիբները, այլ եւ նոյն իսկ նրա տպագիր աշխատանքներից մէկը՝  
«Մէկին խօսի, միւսին հարս» վէպը, որից, չնայած Ա. Յովհաննիս-  
եանի եւ ուրիշների ջանքերին, չէ գտնւած եւ ոչ մէկ օրինակ։ Այդ վէ-  
պը տպագրւել է Մոսկվայում յիսունական թւականներում եւ ըստ մի  
քանի տւեալների՝ ոչնչացւել է Մ. Նալբանդեանցի ձեռքով։ «Վէպի  
բովանդակութիւնը մինչեւ իսկ յայտնի չէ» \*), ասում է Ա. Յովհան-  
նիսեանը։ Այս վերջինիս ասելով՝ մինչեւ այժմ չէ գտնւած եւ կորսւած  
են համարւում նաեւ Մ. Նալբանդեանցի «Մեր տեսածը եւ լսածը»  
անտիպ կարեւոր աշխատութիւնը, ինչպէս եւ զեռ արտասահմանեան  
ձամբորդութեան ժամանակ նրա դրի առած յիշատակարանը, որի  
մասին Նալբանդեանցը բանտից ուղարկած իր մէկ նամակում  
հետեւեալն է դրում. «Մի օր գուցէ Աստուծու այցելելով յի-

\*). Վաղ պատամնեական օրերից աղօտ կերպով յիշում եմ հետեւեալը։ Զօրս մօս  
կար (Մ. Նալբանդեանցի մտերիմ ընկերն է եղած Մոսկվայի համալսարանական օ-  
րերից) մի օրինակ այդ բարակ, մօտ 75-80 էջ կազմող «Մէկին խօսի, միւսին հարս»  
գրքոյիկց։ Աւելի շատ դա մի վիպաշխան պատմւածք էր, քան թէ վէպ, իսկական  
մտքով։ Այդ պատմւածքում, կամ վիպակում, պատմում էր Նոր-Նախիչեւանի  
կեանիցից առած մի իրական դէպք։ (Վիպակի լեզուն աշխարհարան էր, տեղ տեղ  
էլ, մանաւանդ մի քանի տում երգերը, նոր-Նախիչեւանի բարբառով)։ Վէպի հե-  
տում է մի երիտասարդ, որ իր սիրած օրինրդի հետ ամուսնանալուց առաջ որոշում  
է նախ ուլստի գնալ Մշոյ Սուլթան Ս. Կարապետի վամբը։ Միանալով Ն. Նախիչե-  
ւանցի երիտասարդներից բաղկացած 11 հոգինց ձիաւոր մի խմբի, նա ուղեւոր-  
ում է Ս. Կարապետ։ Շարունակութեան մէջ պատմւած է նաևապարհին պատահած  
մի քանի արկածների, այլ եւ Ն. Նախիչեւանի հարսանիքների, Վարդավառի եւ  
ուրիշ տօների, ծիսերի ու սովորութիւնների մասին։ Եթե երիտասարդը երեւ ամսից  
յետոյ վերադառնում է Ս. Կարապետից, տիրութեամբ իմանում է, որ իր նշանածը  
մէկ ուրիշի հետ է ամուսնացել։ Յիշում եմ հօրս պատմածներից եւ այն, որ Նալ-  
բանդեանցը, գրելով այս հասարակ, անպահոյն դէպքը, պատառ է ունեցել համո-  
րանդեանցը, գրելով այս հասարակ, անպահոյն դէպքը, պատառ է ունեցել համո-

շատակալանս կարգի կրերհմ և կտպեմ ուշադրութեան արժանի տեղեկութիւնք և զիտողութիւնք մեր ցիր ու ցան եղած հայերի մասին»<sup>\*)</sup> : Մինչեւ այժմ չգտնւած գրութիւնների շարքումն են նաեւ համեւնալ աշխատութիւնները : - Նրա մերկացումները ուղղւած Զէյթունի ապատամ բութեան հետ կապւած «Հերոս», «իշխան» Լեւոն Լուսինեանի դէմ : Այդ գործի մասին յիշատակութիւն կայ Նալբանդեանցի գատարանական ցուցմունքների մէջ : Բացի այդ, յայտնի է նոյնպէս (այդ մասին քանից յիշում է Նալբանդեանցը) . Սուլթան-շահին բանտից գրած իր նամակներում), որ բանտում Մ. Նալբանդեանցը գրել է . ա) «Աշխարհաբարի քերականութեանը վերաբերող ուսումնասիրութիւններ», բ) «Բնապատամութեան ներածութիւնը» , գ) «Քիմիայի և շերամաբուծութեան ձեռնարկ», դ) Կիրակոս Գանձակեցու պատմութեան ասթիւ մի յօդւած և ուրիշ աշխատութիւններ : Սրանք բալորը մինչեւ այժմ չեն դտնւած : Դրանց վրա պէտք է աւելացնել բանտից նրա զրած հարիւրից աւելի նամակները, որոնց մէջ նա արձարձել է ուշադրաւ մտքեր, լեզու, դրականութեան, պատմութեան ու գիտական մի շարք հարցերի մասին, և որոնցից միայն երեսունը յայտնարերւած են մինչեւ այժմ : Միւսները, ըստ երեւոյթին, պէտք է ընդմիշտ կորսւած համարւեն :

Ա. Յովհաննիսեանի լոյս ընծայած հատորի մէջ ամենահետաքրքրական կտորներն են Նալբանդեանցի «Սենատական ցուցմունքները» և Պերճ Պոօշեանցի «Սոս և Վարդիթեր» վէպի քննադատութիւ-

<sup>\*)</sup> Աւելորդ չեմ համարում Մ. Նալբանդեանցի մինչեւ այժմ չգտնւած աշխատութիւնների տարիւ մէջ բերել ենտեւեալը, որ լսել եմ Նալբանդեանցի երկու ընկերներից : Եթի ուսւ կառավարութեան ժամկարմները խուզարկում էին Մ. Նալբանդեանցի իրերը և դրերը ու ամբողջը ՚ի մի էին հաւաքում, Նալբանդեանցը մի պահ հեռանում է կողքի սեմեակը և այնոնք մնացած ձեռագիրների մի կապոց զարտագողի յանձնում է հօրը, որ նա «խորունի տեղ պահէ» :

Հայրը այդ կապոց տանում է նախ, խոհանոց, բայց երբ ժամկարմները եւ ձերբակալւած Նալբանդեանցը կառք նստած հեռանում են, առնում է այդտեղից կապոցը և ծերունի հարուստ Մովսէս Խովանդեանին է յանձնուում, որը առհասարակ համբային գործերով չէր հետաքրիւում եւ, ուրեմն, ազատ էր կասկածներից ու խուզարկութիւններից : Մի ժամի ամիս մնացած Նալբանդեանցի հայրը իմանում է, որ հոգինանք չափազանց «խորունի տեղ է պահել» կապոցը՝ նա արտօնուցն էր ձըգել այն . . . երբ երեք տարի յետոյ Նալբանդեանցը բանուում իրեն այցելող մի ընկերից իմանում է այդ մասին՝ երկու ձեռներով բանում է գլուխը եւ բացազնում. մէջն եր. . . :



րակութիւնը, հանդիսաւոր կերպով բերում է նրա աճիւնը Ն. Նախի-ջեւան եւ թաղում քաղաքի մօտ գտնւող Ս. Խաչ վանքի բակում:

Սկզբում, թէ ինքը, Նալբանդեանցը եւ թէ նրա համախոհները համոզած էին, որ ձերբակալման գլխաւոր պատճառները Գարբիէլ վ. Այլաղովակու մատնչական նամակներն էին, քսութիւններով ու մեղաղբանքներով լի՝ որոնք նա քանիցս ուղարկել էր՝ ստորագրւած ու անստորագիր՝ ուու ներքին գործոց նախարարութեան ու քաղաքական ոստիկանութեան: Բայց ճիշդն այն է, որ Նալբանդեանցի ձերբակալման պատճառները այն նամակներն էին, որ գրել էր նրան Լոնդոնում ապրող ուու յեղափոխական Մ. Բակունինը: Նամակները գտել էին Լոնդոնից Ռուսիոյ սահմանները ուղեւորուղ Բակունինի համախոհ Վէթոշնիկովի մօտ: Վերջինիցս գրաւել էին նաեւ նոյն ժամանակւայ միւս հոչակաւոր ուու քաղաքական տարագիրներից՝ Հէրցէնի, Օգարեօվի եւ Կելսիերի ձեռքով գրւած նամակները: Նալբանդեանցի հետ մէկտեղ ձերբակալւել էին նաեւ «Լոնդոնի պրօպագանդիստների» խմբակի գործով մեղաղբող 32 հոգի ուու աչքի ընկնող մտաւորականներ, որոնց թւում եւ նշանաւոր հրապարակախօս-քըննադատ Զերնիշեւսկին: Սրա գործը սակայն քննւում էր առանձին: Պէտք է ասել, որ 1861 թ. ուու գիւղացիների ազատագրումից յետոյ, շարունակ տեղի էին ունենում ուու գիւղացիական ապստամբութիւններ, որոնք թէեւ տեղական եւ մասնաւոր բնոյթ էին կրում, բայց վերին աստիճանի մտահոգում էին կառավարութիւնը: Դրա հետեւանքով բազմապատկել էին կառավարութեան բանեցրած խըստութիւնները թէ գիւղացիական եւ թէ նրան համակրող ուու մըտաւորականութեան վերաբերմամբ: Մագած խռովութիւնները զագելու համար, կառավարութիւնը փաստօրէն պատերազմական դրութիւն էր յայտարարել մայրաքաղաքում: Փակւել էին ուու նշանաւոր ամսագիրները՝ Զերնիշեւսկու «Սօվլէմէննիկ»-ը եւ Դօրրօլիւրովի «Ռուսկօէ Սլովօ»-ն: Այս բոլորը առիթ ծառայեց ուու պահպանողական մամուլի եւ կառավարչական խաւերի ձեռքին՝ մեղաղբելու «Լոնդոնի պրօպագանդիստներին» եւ սրանց պարագլուխ Բակունինին էր Հէրցէնին ամէն տեսակ քաղաքական յանցանքների մէջ (մայրաքաղաքներում տեղի ունեցած մի շարք հրդեհները) այլ եւ այն բանմ, որ սրանք Ռուսաստան են ուղարկել իրենց գլխաւոր գործակալներին ապստամբական օջախներ պատրաստելու նպատակով Ռուսաստանի բոլոր մասերում՝ հիւսիսից մինչեւ Անդրկովկաս: Կեդրո-ահարեկւած էր եւ կարծում էր թէ ապստամբութիւններ կարող են տեղի ունենալ նաեւ Ռուսաստանի ծայրամասերում՝ Լեհաստանում,

Փոքը Ռուսիայում, Հիւսիսային Կովկասում, Անդրկովկասում եւ մանաւանդ Կովկասում, որ վաղուց է արդէն հանդիստ չէր լեռնականների անվերջ ըմբոստութիւններին հետեւանքով։ Ռուս կառավարութիւնը երկիւղ ունէր ոչ այնքան «Լոնգոնի պրոպագանդիստներից» որքան նրանց գործակալներից, որովհետեւ սրանք էին, վերներից ջին հաշւով, խօսքից գործի անցնողները եւ ապա ուրեմն ցարիզմի ահեղ թշնամիները։ Այս յանցանքներով մեղադրողներին այնպիսի նշանակութիւն էր արում, որ գործի քննութիւնը յանձնաբարւում «աշխական Սենատին», որին կից ստեղծւել էր «Յատուկ Յանձնահողով»։ Անձնապէս ուշադրութիւն էր գրաւել Մ. Նալբանդեանցի «զործը», չնորհիւ նրա մօտ ձերբակալման ժամանակ գտնւած մի քանի թղթերին, որոնց թւում Բակունինի կազմած տպագիր յայտարարութիւնը, որ պարունակում էր զաղտնագրել ու յատուկ գաղտնի բառարան, ապա Նալբանդեանցին Պոլսից ուղղւած հայերէն մի նամակ որտեղ խուլ ակնարկներ կային «կոմիտէների» կազմակերնամակ որտեղ խուլ ակնարկներ կային «կոմիտէների» մասին։ Մարտիրոսութեան, ինչոր մասօնական օթևակների ստեղծման, «Մարտիրոսին յանձնելու նամակի (գաղտնի բառարանից երեւում էր որ Մարտիրոսը յայտնի խուլացի յեղափոխական Մաձճինին էր) մասին» եւ այլն։ Ռուսերէն լեզով կոչը դիմում էր «ռուս, լեհ եւ բոլոր սլաւոն ընկերներին», բացի այդ, թղթերի մէջ կային նաեւ Բակունինի, Մաձճինիի, Գարիբալդիի լուսանկարներ։ Կառավարութեան տրամադրութեան տակ կային Վէթոչնիկովի ձերբակալման ժամանակ միւս նիւթերը, որոնք ըստ ամենայնի շատ մեծ յայտնագործւած միւս նիւթերը, որոնք ըստ ամենայնի շատ կասկածի տակ էին գցում Նալբանդեանցի անձնաւորութիւնը։ Բացի կասկածի տակ էին գցում Վակունինի մօտ գտնւած Բակունինի նամակ-Լոնդոնից վերագարծող Վէրշինինի մօտ գտնւած Բակունինի նամակ-Ներից, գրաւել էին նոյնպէս չորս օրինակ ոմն Ս. Մանիկեանի հեղիներից, գրաւել էին գայն գործառնութիւնը» դրքից (Սենատանկութեամբ լոյս տեսած «Երկրագործութիւնը» դրքից)։ Ցուցը չիմացաւ, որ Մանիկեան Նալբանդեանցի կեղծ անունն էր)։ Ցուցը չիմացաւ, որ կառավարութիւնը մինչեւ վերկան ցուցմունքներից երեւում է, որ կառավարութիւնը մինչեւ վերկան գործառնութեանցի մի տեղեկագիր պայթուցիկ եղեւ թրքահայ լեզով գրած ընդարձակ մի տեղեկագիր պայթուցիկ եղեւ թրքահայ լեզով գրած ընդարձակ մի տեղեկագիր պայթուցիկ եղեւ թրքահայ լեզով գրած ընդարձակ մասին եւ մի շարք այլ թղթեր, որոնք ակնիւթեր պատրաստելու մասին եւ մի շարք այլ թղթեր, որոնք ակնիւթեր պատրաստելու մասին։ Խոտակայի պատառքումը մահացու հարւած է նակցութեան մասին։ Խոտակայի պատառքումը մահացու հարւած է հասցնելու աւտարոհունքարական միապետութեան, որը տապալելու հասցնելու աւտարոհունքարական միապետութեան, որը տապալելու հասցնելու է Հունգարացիների եւ իտալացիների հաւաքական ուժով եւ դրա հետէ հաղանական եւրոպայում, Բալբանեան երկիրներում եւ Ռուսասկեդրոնական եւրոպայում, Հաւաքական շարժում առաջ բերելու ծրագիրը։ Առանում աղջային յեղափոխական շարժում առաջ բերելու ծրագիրը։ Բակունինի այդ ծրագիրը խօսում էր ուրա աղջերի ընդհանուր դաշտականներից մասին։ Խոտակայի պատառքումը մահացու հարւած է նակցութեան մասին։ Խոտակայի պատառքումը մահացու հարւած է հասցնելու աւտարոհունքարական միապետութեան, որը տապալելու հասցնելու է Հունգարացիների եւ իտալացիների հաւաքական ուժով եւ դրա հետէ հաղանական եւրոպայում, Հաւաքական շարժում առաջ բերելու ծրագիրը։

տեւանքով խորտակելու է նաև Թիւրքիան։ Ռուսաստանը հասունացած է, ասում էր ծրագիրը, զիւղացիական յեղափոխութեան համար, որ պիտի բռնկի, եթէ զիւղացիութիւնը չստանայ աղատութիւն եւ հող։ Կառավարութեան ձեռքն էր ընկել, ինչպէս երեւում է «Մենատական ցուցմունքներից», Բակունինի Գարիբարդիկն ուղղած մի նամակը, որտեղ խօսում է Լեհաստանի մասին եւս։ «Մեր նալատակն է, գրում էր Բակունինը, Մոսկվա-Պետերբուրգ կենարոնների ոչընչացումը, կատարեալ աղատութիւն եւ ինքնալարութիւն։ անկախութիւն լեհաստանի եւ ոչ-լեհական այն երկրամասերի, որոնք կազմում են Ռուսաստանի պետութիւնը։ կեանքի եւ մահու պատերազմ Աւոտրիայի, ինչպէս նաև Թիւրքիայի ու մասամբ Ռուսաստանի դէմ, որչափ որ վերջինս լեհական երկրամասից է կազմւած եւ, վերջապէս, սլաւոնական բոլոր ժողովրդների ընդհանուր գաշնակցութիւնն ։ ։ ։ Ո՞րտեղից է սկսելու շարժումը, հարցնում էր Բակունինը։ Արդեօք առաջ կը գայ Խոտալիայի յանկարծակի ապստամբութիւնից, մաճառ, ոլու, հայ եւ յոյն ժողովրդների մէջ, թէ, այնուամենայնիւ, տեղի կունենայ Ռուսաստանում - ահա հարցը։ Մենք գործ կ'ոնենք բոլոր միջոցները, որ այդ ապստամբութիւնները նպաստեն ու յանդին մի նպաստակի - «Խոտալիայի լիակատար աղատագրմանը, ամբողջ արեմլիքի ապստամբուրեանն ու ազատագրմանը»։

Ծանօթանալով գրաւած նամակների բովանդակութեանը, ասում է Ա. Յովհաննիսեանը, ոստիկանական օրդաններին գժւար չէր նկատել որ, «Լոնդոնի պրոպագանդիստները» արտակարդ ջերմ վերաբերմունք ու անսահման վստահութիւն ունեն դէպի Նալբանդեանցը։ Օգարեօմի մի նամակում դրած Սենո-Սօլովեյովիչին, Նալբանդեանցը կոչւում էր «անձնեէր, առանց շահաբինդրութեան, ոսկի հողի»։ Հերցէնը նոյն Սենո-Սօլովեյովիչին, որ ձերբակալւած էր, գրում էր Նալբանդեանցի մասին։ «աղնւազոյն մարդ եմ համարում մեր արեւելեան բարեկամին, որին շարունակում եմ յիշել եւ սիրել»։ Ռուս վիպագիր ի. Տուրգենեւին դրած Հերցէնի մի ուրիշ նամակում գտնում ենք «Նալբանդովը - բժշկութեան աղնւազոյն եւ բարի գոկնինի իր քրոջ գրած նամակը, որտեղ ուսւա յեղափոխականը բնութաշուրջնեւելի հետ։ «Նալբանդովը ուսկի մարդ է. ամբողջովին հողի եւ ամբողջովին անձնեիրութիւն է. դու կը սիրես նրան առաջին անգամը էր իր հայ բարեկամին, համեմատելով ուսւա ականաւոր գրող ամբողջովին անձնեիրութիւն է. դու կը սիրես նրան առաջին անգամը էր, Ասուած էլ զիտէ, որ Ասուած է։ Նա եւ խելօք է եւ սիրաւութիւնի հրեն եւ չունի այն սուրբ պարզութիւնը, ինչ

որ ունի Նալբանդովը, որը գրաւում է ոչ թէ խելքով, այլ սրտով, թէեւ գուցէ որպէս իսկական հայ մարդ, շատ խորամանկ է, երբ հարկաւոր է լինում այդ»:

«Սենատական ցուցմունքներ»ից եւ Ա. Յովհաննիսեանի պրազ-  
տուումներից պարզւում է նաև մի շատ կարեւոր փաստ, որը մինչեւ  
այժմս թիւրիմացութեան մէջ էր ձգել Նալբանդեանցի անձնաւորու-  
թեամբ զբաղւող բանասէրներին: Հարցը վերաբերում է Նալբանդ-  
եանցի մօտ գտնւած եւ Պոլսից գրւած այն նամակին, որի հեղինակը  
մինչեւ այժմ համարւում էր «Մեղու» թերթի խմբադիր Յարութիւն  
Սվաճեանը: Քանիցս այցելելով Պոլս, Նալբանդեանցը, ինչպէս  
յայնի է, հաստատել էր այսեղ լայն կապեր առաջադէմ հայ մը-  
տաւորականների հետ: Միեւնոյն ժամանակ Լոնդոնի պրոպագան-  
դիստների աչքում թիւրքիան ոչ միայն մօտալուս ապագայում տա-  
պալւելիք պետութիւն էր, այլ եւ աշխարհագրական տեսակէտից մի  
շատ յարմար երկիր, որտեղից հեշտութեամբ կարելի էր Լոնդոնի  
յեղափոխական հրատարակութիւնները տեղափոխել Կովկաս, Անդր-  
կովկաս եւ Հարաւային Ռուսաստան:\*) Նալբանդեանցի ձերա-  
կալութեան ժամանակ երեւան էր եկել մի շատ հետաքրքրական փաս-  
տաթուղթ: Դա 1862 թ. 14 մայիսի թւագրած եւ Նալբանդեանցի  
հասցէով Պոլսից Պետերբուրգ ուղարկւած մի նամակ էր, որի հեղի-  
նակը, ինչպէս ասացինք, ցարդ համարւել է Յ. Սլվաճեանը: Այդ  
նակը, ինչպէս ասացինք, ցարդ համարւել է Յ. Սլվաճեանը: Այդ  
նշանաւոր նամակը, որից մէջքերումներ է արւած «Անտիպ Երկեր»ի  
մէջ, ստորագրած է «Ս. Թ.» տառերով: Շատերի կարգին նաև մենք  
մէջ, ստորագրած է «Ս. Թ.» տառերով: Շատերի կարգին նաև մենք  
մէջ, ստորագրած է «Մ. Նալբանդեանցի համարկալից եւ եղերա-  
30 թ. թ. գրքոյկներում», «Մ. Նալբանդեանցի փոթորկալից եւ եղերա-  
կան կեանքը» փոթորկով: Այժմ հաստատէս եւ վերջնա-  
կան կեանքը» իսրագրով: Այժմ հաստատէս համապատէս եւ վերջնա-

\*) Երեսուն տարիմեր յետոյ, ինչպէս գիտենք, Պարսկաստանը իր աշխարհագրա-  
կան դիրքի շնորհիւ, դարձաւ այն յարմար երկիրը, որի վրայով հայ եւ ոռու յե-  
կան դիրքի շնորհիւ, դարձաւ այն յարմար երկիրը, որի վրայով հայ եւ ոռու յե-

մակերպութեան ինդրով \*), այլ եւ կապեր էր պահում ու օժանդակութիւն ցոյց տալիս «Տաւրոսի Լեռնականներին» (Զէյթունի): Նամակին կցւած ծածկագրից երեւում էր, - ինչպէս ասում է Ա. Յովհաննիսեանը, - որ Թագւորեանը մէկն էր Պոլսի այն բարեկամներից, որոնց օժանդակութեամբ Նալբանդեանցը քաղաքական աշխատանք պիտի կազմակերպէր Թիւրքիայում եւ Կովկասում: Հետագայում, 1862 թ. աշնանը, մենք հանդիպում ենք Թագւորեանին Փարիզում, որտեղ, նա մասնակցում էր Զէյթունում վնասաւածների օգտին Կ. Վ. Շահնազարեանի գլխաւորութեամբ կազմած նւիրահաւաքման եւ օդ-նութեան մարմնի աշխատանքներին: Նամակում կայ, ի միջի այլոց, հետեւեալ տողը. «Տաւրոսէն քանի օր է որ Պոլսի եկած է վարդապետ մը»: Ա. Յովհաննիսեանի կարծիքով, այդ վարդապետը Գր. Անպարտեանն է, որը հետագայում ուղեւորւեց Փարիզ Բօնապարտի հովանաւորութիւնը խնդրելու համար: Թագւորեանը կապւել էր անմիջապէս նրա հետ: Նամակի մէջ յիշւած «առեւտուր մը անելու» բառերը նշանակում էին նրա միջոցով Զէյթունութիւններին ո եւ է օդ-նութիւն հասցնել: Նալբանդեանցի ձեռքով գրած ծածկագրերից դատելով, շարունակում է Ա. Յովհաննիսեանը, Թագւորեանի քաղաքական գործունէութիւնը շատ աւելի լայն ծաւալ ունէր, քան կարելի էր ենթադրել մեր ձեռքը հասած նրա նամակից: «Ակներեւ է, որ Թագւորեանը, զրում է Ա. Յովհաննիսեանը, Պոլսի այն «բարեկամներից» մէկն էր Հէնց, որոնց միջոցով Նալբանդեանցը Բակունինի և Հերցէնի յանձնարարութեամբ քաղաքական աշխատանք պիտի կազմակերպէր Թիւրքիայում եւ Կովկասում»: Այդ ենթադրութիւնը առում է «Երկերի» խմբագրով գալունի բառամթերքում գտնած «զօրք կենտրոնացնել», «լեռնականաց հետ դաշն կապել», «աղդայնութիւնը զարթեցնել», «Մաճճինի», «Գարիբալդի», «Զարտոռիժսկիյ», «Բուռսաստան», «Ֆրանսիա», «Անգլիա», «Վասով», «ոռումք», «Բնդպանօթ» եւ այլն բառերի կապակցութիւնից: Ա. Յովհաննիսեանի կարծիքով ծածկագրի մէջ հաստատապէս տեղ են դաել եւ պետութիւնների եւ

\*) Ըստ մեր հաւաքած տեղեկութիւնների, հայկական լեզով Փրամ-մատնական եւ Հայկական անուն կրող օրեակի ծրագրը Ս. Թագւորեանը պատրաստել է Յ. Սըլահեանի եւ Սրբափառ Հեքիմեանի հետ: Առանց մանրամասնուրի իւնների մէջ բերք անձնաւորութիւնները եւ մի շարք ուրիշ մտաւորականներ կազմեցին Պոլսում, 1866 թ. գարնանը, «Ակր» անւան տակ Փառանական հայկական մի օրեակ: Բայց այս անգամ օրեակը ոչ թէ անգիտական «Մեծ Օրեակ»ի հոլանդաւորութեան տակ էր, այլ ենթակայ էր ֆրանսիայի «Մեծ Արեւելք» մայր օրեակին:

յեղափոխական կազմակերպութիւնների միջամտութիւն նշող բառեր  
ու դարձածքներ : «Այս երկուութիւնը, տառած է Ա. Յովհաննիսեանը,  
անդրադարձնում է ոչ թէ թղթակիցների քաղաքական դիրքորոշման  
հակասութիւնը, այլ եւ այն հակասութիւնը, որ գոյութիւն ունէր ի-  
րական կեանքում, որտեղ բախւած էին հայկական շարժման լիբերա-  
լինտէրվանսիոնական եւ յեղափոխական-դևմոկրատական հոսանքնե-  
րը : Մածկագրի երկուութիւնը անդրադարձնում էր միայն հայկական  
շարժման հասարակական-քաղաքական բարդ, հակասական վիճա-  
կը : Հիմնւելով Նալբանդեանցի թէ՝ արդէն յայտնի գրութիւնների  
եւ թէ վերջի տարիները զանւած նոր նիւթերի ինչպէս եւ մի քանի  
ուղղակի եւ անուղղակի տուեալների վրա, Ա. Յովհաննիսեանը են-  
թագրում է, որ «Նալբանդեանցը մերձաւոր կապեր ունէր պոլսահայ  
հասարակական այն շրջանների հետ, որոնք քաղաքական կազմա-  
կերպչական աշխատանքներ էին տանում Թիւրքիայում հայ ազգա-  
յին-քաղաքական շարժման շուրջը . որպէս միջոցով, Նալբանդեանցը  
նուր ծրագիրն ուրբաղծում էր Բակունինը Գարիբալդիին իր ուղղաւծ  
նամակում»: Մի քէզ կարուկ իր այս եղրակացութիւնը հաստատելու  
համար, Ա. Յովհաննիսեանը յենուում է «Երկրագործութեան» մէջ  
յայտնած Նալբանդեանցի այն կարծիքի վրա (իր թէ Նալբանդեանցի  
յայտնած միայնակ պարեկամ թղթակիցն) է զրել նրա այլ մասին) թէ՝ լայ-  
«թրքահայ բարեկամ թղթակիցն» է զրել նրա այլ մասին) թէ՝ լայ-  
նածաւալ մի երկրում ազստամբութեամբ ձեռք բերած ազատութիւնը  
մեծ ազդակ կարող է հանդիսանալ Ռուսաստանը կաղմող մանր ազգու-  
թիւնների ազատագրութեան համար եւս :

Խօսերով Նալբանդեանցի քաղաքական միանումների մասին, Ա.  
Յովհաննիսեանը քննադատութեան է ենթարկում մի քանիսների սխալ  
(եթէ չասենք միամիտ) կարծիքը Նալբանդեանցի մասին: Այսպէս ,  
(եթէ չասենք միամիտ) կարծիքը Նալբանդեանցը իր «Երկրագործու-  
որինակ, եղել են կարծողներ, թէ Նալբանդեանցի մասին: Այսպէս ,  
թե նա մի աեղ ուղղակի չէ խօսած քաղաքական հարցերի մա-  
թեան» մէջ ոչ մի աեղ ուղղակի չէ խօսած քաղաքական հարցերի մա-  
սին եւ իրբեւ թէ նա չէր ըմբռնում կամ նոյն իսկ ժխտում էր քաղա-  
քական իշխանութիւնը նւաճելու կարեւորութիւնը: Նալբանդեանցին  
քաղաքական ազատութիւնը, եթէ բացակայում է չէր գոհացնում քաղաքական ազատութիւնը, թէ ճգտելով տըն-  
երկեր»ի խմբագրողը, «այդ գեռ չէ նշանակում, թէ ճգտելով տըն-  
երկեր»ի խմբագրողը, «այդ գեռ չէ նշանակում, թէ ճգտելով տըն-

կունինին անիշխանական համարողները, մոռանում են նախ որ 1862 թւին ինքը Բակունինը անիշխանական չէր տակալին եւ ապա՝ անդիտանում են այն իրողութիւնը, որ «Երկրագործութեան» մէջ հեղինակը պարզապէս նպատակ չէ ունեցել ծանրանալու թիւրքիայի քաղաք. ազատագրման վրա : Նալբանդեանը «Երկրագործութեան» մէջ գրում է եւ ընդգծում թէ՝ տեսական սահմանից չէ պիտոյ գուրս գանք այս անգամ» . նոյն գրքում հայ հրապարակագիրը ակնարկում է այն մասին, որ մտադիր է մի այլ անգամ անդրագառնալ պետութեան խընդրին . «տէրութիւնը ազգ չեն, - գրում է Նալբանդեանը, եւ տէրութեանց շահը ազգի շահի հետ ընաւ վերաբերութիւն չունի, քանի որ տէրութեանց կազմութիւնը այնպէս է, ինչպէս որ կան այսօր . ի՞նչ է տէրութիւնը, այդ մասին մի ուրիշ ժամանակ» : Բաւական է ուշադրութեամբ կարգալ «Երկրագործութեան» մէջ հայ երիտասարդութեան նւիրւած կտորը, տեսնելու համար այն մեծ հաւատը որ տածում էր նա դէպի «ազգի կենսանորոգ եւ որոտնդոստ յարութիւնը» եւ որի «ներկան թշւառ է եւ որի ստրկութիւնը եւ աղքատութիւնը» պահանջում է դիմադրութիւն . . .

Հայաստանի ազատագրման հեռանկարը նա շաղկապում էր ոչ միայն Ռուսաստանի այլ եւ բոլոր միւս բնակալութիւնների դէմ արծարծող յեղափոխական շարժումների հետ : Նալբանդեանցը հակառակ էր որ եւ է երոպական պետութիւնների միջամտութեան հայ ազգի ճակատագրի լուծման մէջ : Դա երեւում է ոչ միայն նրա գրութիւններից, այլ եւ «Աննատական ցուցմունքների» ժամանակ նրա արած այն յայտարարութիւններից, որոնք վերաբերում են Զէյթունի համարած կապահած կեւոն Լուսինեան կոչող «Հայաստանի իշխանին» : Անցեալ դարի կէսերին երեւան էր եկած կասկածելի անցեալով եւ ներկայով մի ինչոր «Հայաստանի իշխան», կեւոն Լուսինեան անունով, որ Հայաստանի խորտակւած զահի իրաւունքների պաշտպանութեան անւան տակ մի շարք բախտախնդիր ելոյթների էր դիմել : Իբրեւ թէ կիլիկիայի Հայոց կեւոն Զ. թագաւորական տոհմից սերած այդ բախտախնդիրը, Զէյթունի ազստամբութիւնից շատ տարիներ առաջ, խնդրել էր Ռուսաց կառավարութիւնից ընդունել իրեն, որպէս ոռուհապատակ, ցարական բանակ, որոշ ոռմիկով եւ արտօնել, որ կրէ կեւոն Ե. ի սահմանած Լուսինեան շքանշանը : Դրանից առաջ նա ուղարկում է ցարին մի անստորագիր բրոշիւր Լուսինեանների տան մասին : Երկար է այդ բախտախնդիրի պատմութիւնը : Այսքաղի ասենք, որ ոռու կառավարութիւնը, տեղեկանալով Փարիզի գեսպանից, որ «իշխանի մտաւոր ունակութիւնները որոշ խանգարում ունեն», մերժում է «իշխան»ի խնդիրը, որից յետոյ նա անց-

նում է Եւրոպա եւ, երկար տարիներ Եւրոպական պետութիւնների գոները բախելուց յետոյ, յաջորդաբար արտաքսում է Փարիզից, Լոնդոնից (մի ինչոր մութ գործի համար) եւ այլ տաղերից։ 1860 թւին այդ «իշխան»ը նորից դիմում է ոռւս պետութեան եւ այս անդամ նոր կայսր Աղեքսանդր Երկրորդին։ Իր դիմումը վերտառում է «Memorandum du Prince d'Arménie à S. M. I. Alexandre II, Empereur de toutes les Russie»։

Ահա այս տեղեկադիրը աչքի առաջ ունէր Նալբանդեանցը «Սենատական ցուցմունքների» ժամանակ «իշխան»ի արած իր մերկացումներով։ Նա կանոն է առնում նոյնպէս այն «ըշաբերական»ի վրա, որ «իշխան»ը ուղղել էր 1862 թւին «Տաւրոսի պրոտեկտորի» պետութիւններին։ Բայց երեւոյթին՝ թիւրքահայ գաղութներում եւ յատկապէս Պոլսում առաստելներ էին տարածւած «Լեւոն իշխան»ի անւան շուրջը։ Դեռ 1861 թ. պատմում էին, որ «իշխանը» մտել է Կիլիկիա, Հանրապեր է կազմել Զէյթունցիների սուրադրութեամբ, Կիլիկիա, Հանրապեր է կազմել Զէյթունցիների սուրադրութեամբ, Կայուն գործում է Նապոլէոն Գ.-ին՝ Հայկական Տաւրոսում ինքնարուց դիմել է Նապոլէոն Գ.-ին՝ Հայկական Տաւրոսում ինքնարուց դիմել է Նապոլէոն Կայսեր, թէ Տաւրոսի լեռներում 70 հազար զէնք բըռնելու ընդունակ Հայեր կան, որոնք, Լիբանանի նման սպասում են Ֆրանսիայի «աղատաբար» միջամտութեանը։ Կային նաեւ ասողներ, որ Հայկական «գահաժառանգի» այս բանակցութիւններն են հէնց, որ առիթ տւին Թիւրքերին 1862 թ. Օդոսոսին պաշարելու Զէյթունը, որի ցոյց տւած քաջարի դիմադրութեան հետ քաղաքական յոյսեր էին կապում որոշ խաւերի Հայերը։ Նալբանդեանցը «Սենատական ցուցմունքների» մէջ բացասական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի Հայաստանի ազատութեան անունով Հրապարակ իջած այլ «շառլատանը» (Նալբանդեանցի խօսքերը), որին Նալբանդեանցը ի մէջ այլոց, Համարում է նաեւ անդիմական քաղաքական «ագէնտ» մէջ արդէն զրել է բողոքադիր եւ մտադրութիւն է ունեցել բականի դէմ արդէն զրել է բողոքադիր եւ մտադրութիւն է ունեցել բարձմանել Եւրոպական բոլոր լեզուներով՝ զգուշացնելու Եւրոպա-Բարձմանել Հայերին «շառլատանի» արարքների դէմ։ Ցուցմունքներից մին եւ Հայերին «շառլատանի» արարքների դէմ։ Ցուցմունքներից երեւում է, որ Նալբանդեանցը բացասական վերաբերմունք ունէր ոչ երեւում է, որ Նալբանդեանցը բացասական վերաբերմունք ունէր ոչ միայն Լուսինեանի հանդէպ, այլ եւ կասկածով էր վերաբերում այս վերջինիս յետեւը թագնւած ոյժերին եւ ամենից առաջ անգլիական վերջինիս յետեւը թագնւած ոյժերին եւ ամենից առաջ անգլիական վառակարութեանը։ Հականդիմական այդ վերաբերմունքը, ինչպէս

նկատում է Ա. Յովհաննիսեանը, արտայայտել է նաև Նալբանդեանցի բանտից գրած մասնաւոր նամակների մէջ։ Դրանցից մէկում նա անգլիակ կառավարութեան վաճառւած սրիկայ է անւանում «Արշալոյս Արարատեան»-ի խմբագիր Հ. Պալտաղարեանին, աւելացնելով որ նա աշխատում է յօդուտ թիւրքիայի եւ Անգլիայի, որոնցից նըսպասներ է ստանում իր զգելի թերթի հրատարակութեան համար։ «Սակայն, ասում է իր բացատրութիւնների մէջ Ա. Յովհաննիսեանը, «Հայաստանի իշխան»ի գործունէութիւնը եւ Նալբանդեանցի նրա մասին տւած ցուցմունքները կարեւոր են մի այլ տեսակչափ։ Նրանք ցոյց են տալիս, որ «Հայաստանի ազատութեան» եւ մասնաւորապէս Զէյթունի շուրջը սկսած պայքարի մէջ տեղի ունէր քաղաքական հակամարտ ուժերի բախում։ իրար էին զարնում մի կողմից արեւմրտահայ կղերի եւ բուրժուազիայի այն խաւերը, որոնք «Հայաստանի իշխան» եւ իր գործակիցների միջոցով ֆրանսիայի եւ Անդրայի միջամտութիւններից էին անհայտում կիրիկիայի կամ տեղի ճիշդը, նրա ծովամերձ քաղաքների աղատումը, իսկ միւս կողմից՝ պոլսահայ արմատական-դեմոկրատական այն խաւերը, որոնք կապեր էին որոնում գաւառի - Տաւրոսի լեռնականների գիւղական ժողովրդի հետ եւ Նալբանդեանցի միջոցով շփման կէտեր որոնում՝ Ռուսաստանի եւ Եւրոպայի ազգային-Եղափոխական շարժումների ու դրանց զեկավարների հետ»։

Նալբանդեանցի կարծիքը եւրոպական պետութիւնների «Հայաստան» մասին միշտ բացասական է եղած։ այսպէս օրինակ, բանտից գրած մի նամակում նա ասում է. «Հայերը Տաճկաստանում զուրկ են ո եւ է պաշտպանութիւնից։ Անգլիական եւ Փրանսիական կառավարութիւններն իրենց օգտին են ծառայեցնում այդ հանգատակ են առնում այն քրիստոնեաններին, որոնք կամ բողոքականութեան, կամ կաթոլիկութեան զիրկն են ընկնում»։

Ինչպէս ասացինք՝ Նալբանդեանցի «Անտիպ Երկերի» հատորի մէջ կարեւոր տեղ է բնում «Ոս եւ Վարդիթեր»-ի քննադատութիւնը։ այն եղակացութեան, որ Նալբանդեանցը բանտում գրած է քննադատութիւնների երկու տարբերակ (վարիանտ)։ Հիմնականում կան-քննադատական բաղմակողմանի մերձեցման կարիքն առաջ է մերձեցումը որոշ երկութիւն էր առաջցըրել, ըստ երեւոյթին, գըր քննադատութեան մէջ եւ այս հանգամանքը հարկադրում է Նալ-

